


ԲԱՆԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՈՐՊԵՍ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆԻՉ

Ա. Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Բանկերը այնպիսի տնտեսական կառույցներ են, որոնց հիմնական գործունեությունը ազատ դրամական միջոցների հավաքագրումն է, վարկերի տրամադրումը, դրամական հաշվարկների կատարումը, թղթադրամների և տարբեր արժեթղթերի թողարկումը:

«Բանկ» տերմինը ծագել է իտալերեն «banca» բառից, որը նշանակում է դրամական սեղան, դրամափողի նստարան: «Բանկ» և «Բանկային գործ» հասկացություններն իրենց լիարժեք դրսևորումն են ստանում տնտեսավարման շուկայական մեթոդների պայմաններում, որին բնորոշ են սեփականության տարբեր ձևերի, ֆինանսական շուկայի բազմազան կառույցների, և ընդհանուր առմամբ կայացած ֆինանսական շուկայի, տնտեսավարող սուբյեկտների ինքնուրույնության և պատասխանատվության սկզբունքների, կառավարման ապակենտրոնացված համակարգի և շուկայական տնտեսությանը բնորոշ այլ գործոնների առկայությունը:

Վերջին տարիներին հայաստանյան բանկային համակարգը կրել է լուրջ փոփոխություններ: 2011 թվականին Հայաստանի ֆինանսական համակարգը բավականին ակտիվ գործունեություն է ծավալել: Հայաստանի ֆինանսական համակարգի խոշոր մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի 91.1%-ը:



<http://www.cba.am/am/SitePages/Default.aspx>

Բանկերի տնտեսական դերը հասարակական պահանջ-մունքների բավարարման գործում բավականին մեծ է: Շնորհիվ բանկի ճկուն գործունեության՝ դրամական միջոցները վերաբաշխվում են տնտեսության տարբեր ոլորտների ու արտադրությունների միջև:

Հայաստանը հիմնականում մանր և միջին բանկերի երկիր է: Խիստ սահմանափակ ժամանակամիջոցում առևտրային բանկերը Հայաստանում վերարտադրեցին բազմազան բանկային, ֆինանսական և այլ ինստիտուտներ, որոնք գոյություն ունեին այլ երկրներում:

Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերը իրականացնում են ամենատարբեր գործառնություններ, որոնց թվում բանկային գործառնություններ, որոնք կազմում են առևտրային բանկի գործունեության անմիջական առարկան, գործարքներ, որոնք ունեն օժանդակ նշանակություն և ծառայում են բանկի աշխատանքի կազմակերպչական և նյութական նախադրյալների ապահովմանը:

Հայաստանում առևտրային բարեփոխումների իրականացման ընթացքում ստեղծվեց շուկայական ուղղվածության բանկային սիստեմ, որի օրենսդրական և իրավական կարգավորումները բխում են շուկայական տեսակի բանկային սիս-

տեմներից ունեցած միջազգային պահանջներից: Դրա հետ մեկտեղ հայկական բանկային սիստեմը իր տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման աստիճանով դեռ հետ է մնում աշխարհի առավել զարգացած երկրների բանկային սիստեմներից, ինչն արտահայտվում է նրա ոչ լիակատար բազմակողմանի կառուցվածքի, օրենսդրական և իրավական բազաների թերիություն և առանձին բանկերի թուլության մեջ:

Այնումեծայնիվ, Հայաստանի տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները ենթադրում են էական առաջխաղացում տնտեսական կառավարման սուբյեկտների՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների և այլ բանկերի հետ փոխհարաբերություններում: Բանկերը, որպես կոմերցիոն կազմակերպություններ, որոնց հիմնական գործողություններն են վարկավորումը, ավանդները, կանխիկի տրամադրումը և այլն, դրանց իրականացման ընթացքում տարբեր տեսակի ռիսկերի են դիմում, ինչպես օրինակ տրամադրած վարկը չվերադարձնելը, վարկի տոկոսները չվճարելը, հաշվարկային ռիսկեր և այլն: Բանկային գործողությունների վտանգի աստիճանը կախված է բանկի հաճախորդների գործունեությունից:

Հայաստանի հանրապետության առևտրային բանկերի համար վարկավորումը հանդիսանում է ամենաեկամտաբեր գործողություններից մեկը, բայց դրա հետ մեկտեղ՝ մեծ ռիսկներ կայացնողը: Դա պարտավորեցնում է բանկերին հսկողություն սահմանել վարկավորման հաստատված սկզբունքների վրա, ինչպես նաև վարկառուների կողմից վարկի նպատակային օգտագործման վրա՝ հաշվի առնելով, որ վարկավորման գործընթացի ժամանակ բանկերը ակտիվ ազդեցություն են ունենում վարկառուների տնտեսական և ֆինանսական գործունեության վրա:

Բոլոր հիմնական բանկային գործառնությունները բաժանվում են չորս խմբերի. **պասսիվային գործառնություններին** են (առաջին խումբ) վերաբերվում ավանդների ընդունման, ինչպես նաև փոխառությունների թողարկման բոլոր տեսակի գործառնությունները:

Ակտիվային գործառնություններին (երկրորդ խումբ) վերաբերվում են բոլոր այն գործարքները, որոնք հաճախորդի համար ապահովում են անհրաժեշտ միջոցներ ստանալու հնարավորություն:

Վճարումներին նպաստելու գործառնություններին (երրորդ խումբ) վերաբերվում են այն գործառնությունները, ըստ որոնց բանկը իր վրա է վերցնում հաճախորդի գանազան վճարային պարտավորությունները, ինչպիսիք են՝ չեկերի վճարումները, դրամային փոխանցումների իրականացումը, վճարումների ընդունումը ըստ մուրհակների, պարտատոմսերի և այլ փաստաթղթերի:

Այլ գործառնություններին (չորրորդ խումբ) վերաբերվում են օրինակ, արժութային և ֆոնդային արժեքների գնումը և վաճառքը, բաժնետոմսերի և փոխառության տոմսերի տեղաբաշխմանը նպաստելը, արժեթղթերի ընդունումը և պահպանումը:

Շուկայում բանկերի գործունեության հաջողությունը շատ բանով կանխորոշվում է հաճախորդների՝ ձեռնարկատերերի, ընկերությունների և ֆիրմաների, առանձին անձանց հետ նրանց փոխհարաբերությունների բնույթով: Այդ հարաբերությունները ծագում են իրացված արտադրանքի դիմաց կամ մատուցված ծառայության համար հասույթի ստացման, բանվորների և ծառայողների աշխատավարձի վճարման համար կանխիկ դրամի ստացման, կարճաժամկետ վարկերի տրամադրման և մարման, անկանխիկ դրամական հաշվարկների իրականացման, երկարաժամկետ վարկերի մարման, (Աբգարյան Կ. Առևտրային բանկերի էությունն ու գործառնությունները, Երևան 2006, էջ 19-20) կապիտալ շինարարության ֆինանսավորման համար բյուջետային միջոցների ստացման, նրանց ճիշտ, նպատակային և ռացիոնալ ծախսման նկատմամբ վերահսկողության իրականացման գործընթացի ժամանակ:

Վարկավորման բնագավառում հարաբերությունները կառուցվում են հաստատված սիստեմով: Բանկային վարկավորման սիստեմն ասելով՝ պետք է հասկանալ փոխկապակց-

ված տարրերի ընդհանրությունը, որոնցից կախված է վարկային գործընթացի կազմակերպումը և կարգավորումը՝ ըստ վարկավորման սկզբունքների և ռիսկի:

Վարկավորման սիստեմը հիմնված է 3 կետերի վրա. 1. վարկի սուբյեկտներ, 2. վարկի ապահովում, 3. վարկավորման օբյեկտներ: Այս երեք տարրերը պահպանում են իրենց հիմնական իմաստը, հանդիսանում են վարկային գործողության «դեմքը», նրա ապահովությունը:

Վարկավորման սիստեմի հիմնական տարրերը անքակտելի են: Վարկավորման հարցում բանկի հաջողությունը կախված է այս երեք տարրերի՝ իրար լրացնելու կարողությունից: Մյուս կողմից, նրանց միությունը քանդելու փորձը խախտում է ամբողջ սիստեմը:

Բանկերը, հանդիսանալով առևտրային ձեռնարկություններ, առևտրային բնույթ են հաղորդում նաև վարկավորման գործողությունների ամբողջ սիստեմին: Նախ և առաջ, ելնելով բանկային տնտեսության եկամտաբերությունից՝ վարկերը վճարովի են: Սակայն հարցը միայն դա չէ: Բանկերը, որպես առևտրային ձեռնարկություններ, առևտուր են անում նախ և առաջ իրենց ռեսուրսներով՝ դնելով դրանք վարկային շրջանառության մեջ: Հենց այդ պատճառով բանկերի սովորական տնտեսության մեջ վարկային գործունեության եկամուտը համարվում է հիմնականը: Ամերիկյան բանկերի եկամտի ճնշող մեծամասնությունը հանդիսանում է վարկավորումը՝ ավելի քան 60%:

Բանկի վարկային արտադրանքի չափսը կախված է ոչ միայն բանկի հնարավորություններից, այլև ներգրավված ռեսուրսներից: Ժամանակակից շուկայական համակարգի մեջ մեծ չափերի առևտուր անել հնարավոր է միայն այն դեպքում, երբ բանկը լրացուցիչ ներգրավել է հաճախորդների միջոցները: Քանի որ բանկը ներգրավում է ռեսուրսներ ոչ թե իր, այլ հաճախորդների համար, ստացվում է, որ վարկային արտադրանքի ծավալը այնքան մեծ է լինում, որքան շատ է վերա-

դարձնելու պայմանով կուտակված ֆինանսական միջոցների ծավալը:

Ժամանակակից վարկային սիստեմի առանձնահատկությունը կայանում է ոչ միայն սեփական և ներգրավված ռեսուրսներից կախվածությունից, այլև որոշակի նորմերից, որոնք սահմանում է Կենտրոնական բանկը հաճախորդների վարկավորում կատարող կոմերցիոն բանկերի համար: Հաստատանի Հանրապետության Կենտրոնական բանկը կարգավորում է պարտադիր նվազեցումների տոկոսադրույքը կենտրոնացված պահեստներում: Գոյություն ունեն մաս այլ չափանիշներ, այդ թվում մինիմալ փողային պահուստի տեսքով, որոնք ստեղծվում են կոմերցիոն բանկում, հատկապես խոշոր վարկերի ծավալի կարգավորման ձևով, երբ բանկի պարտավորությունները համեմատվում են իրացվող միջոցների չափսերի հետ:

Ժամանակակից վարկավորման առանձնահատկությունը նրա պայմանագրային հիմքն է: Նախկին սիստեմի հետ համեմատած՝ այդ հռչակագիրը այդքան պարզունակ և տարրական չի թվում: Փողային տնտեսության պատմության որոշակի շրջանում հաճախորդների հետ բանկերի պայմանագրեր իրոք հայտնվեցին: Յավոր սրտի դրանք ձևական բնույթ էին կրում, քանի որ տնտեսական նշանակությունը դրանցում թույլ էր արտահայտված: Միայն այն ժամանակ, երբ ի հայտ եկան կոմերցիոն խթաններ, երբ և՛ բանկը, և՛ հաճախորդը զգացին իրենց միջև համաձայնության խախտումների հետևանքները, վարկային պայմանագիրը դարձավ այն ուժը, որը ամրապնդեց պատասխանատվությունը վարկատուի և վարկառուի միջև:

Անկախ իր եկամտաբերությունից՝ վարկային գործունեությունը տնտեսական ճգնաժամերի, ձեռնարկությունների սնանկության պայմաններում հանդիսանում է ամենառիսկայինը: Ներկայիս պայմաններում վարկի վերադարձը ուշացնելը դարձել է հաճախակի կրկնվող երևույթ:

Վարկավորումը պետք է արտահայտի երկու կողմերի շահերը: Այն բանկերը, որոնք առաջացել են տնտեսական կարիքների շահերից, աշխատում են հաճախորդի պահանջների բավարարման ուղղությամբ: Վարկավորման նպատակն է վարկառուի տնտեսական զարգացման, նրա մրցունակության և եկամտաբերության, անդադար արդյունաբերության և շրջանառության համար պայմանների ստեղծումը: Դրա հետ մեկտեղ, միայն հաճախորդի շահերը չեն կարող որոշիչ լինել: Պետք է հաշվի առնել նաև մյուս կողմի՝ բանկ-վարկատուի շահերը: Նրա շահերը կարող են չհամընկնել հաճախորդի շահերի հետ: Բանկը միշտ ընտրության հնարավորություն ունի, թե որտեղ ներդնի իր կապիտալը: Նրա հնարավորությունները հաճախ սահմանափակ են: Ինչպես հայտնի է, բանկերն աշխատում են որոշակի սահմաններում, ինչը որոշվում է ներկա դրությամբ նրա ունեցած ռեսուրսների ընդհանրությամբ: Հաճախորդներին տրամադրվող վարկերի ծավալը կախված է բանկի սեփական և ներգրավված միջոցների ծավալից:

Բանկերը ձեռնարկություններին տրամադրում են երկարաժամկետ վարկեր արտադրության ընդլայնման, սպառողական ապրանքների և վճարովի ծառայությունների որակի բարձրացման, անվանացանկի ընդլայնմանն ուղղված նորարարական միջոցառումների իրականացման, ինչպես նաև արտահանման բազայի ընդլայնման հետ կապված կապիտալ ծախսերի համար: Վարկավորման օբյեկտներ են հանդիսանում տեխնիկական վերազինման, վերակառուցման, շինարարության, համատեղ ձեռնարկությունների և արտադրությունների ստեղծման մեջ բաժնային մասնակցության համար ձեռնարկության ծախսերը, օժանդակ գյուղական տնտեսությունների նյութատեխնիկական բազայի կազմակերպման և ընդլայնման համար ծախսերը:

Չնայած արժեզրկմանը՝ առևտրային բանկերը, միևնույնն է, սկսում են ֆինանսավորել արդյունաբերական և ագրարային արտադրությունը, առևտուրը, փոքր և միջին բիզնեսը:

Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ շատ ձեռնարկություններ շրջանառու միջոցներով ապահովված են կիսով չափ, իսկ մի մասն էլ՝ միայն 20 - 25 տոկոսով: Երկրում կանգ են առել գործարաններ և ֆաբրիկաներ: Բանկերը ջանում են նրանց օգնել, ինչպես և առևտրի մեջ, որտեղ շրջանառու միջոցները 80%-ով բաղկացած են փոխառություններից:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ գործնականում առևտրային բանկերը լայնորեն զբաղվում են ներդրումային գործառնություններով: Երբեմն նրանք դրա համար օգտագործում են բոլորովին այլ նպատակների համար նախատեսված ռեսուրսներ: Մեր օրենսդրությունը չի արգելում ներդրումային նպատակների համար օգտագործել կարճաժամկետ ներգրավված միջոցները: Օգտվելով դրանից՝ առևտրային բանկերը հաճախ խոշոր դրամական գումարներ են տրամադրում ձեռնարկությունների և կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության համար:

Առևտրային բանկերը շատ բան են արել, որպեսզի հայաստանյան ընկերությունները, որոնք դուրս են գալիս համաշխարհային շուկա, որոնք աշխատում են Հայաստանի Հանրապետությունում, կարողանան ստանալ ցանկացած ծառայություններ և խորհրդատվություն:

Առևտրային բանկերը ընդլայնում են մյուս ծառայությունները, բացում են ավանդային հաշիվներ ազատ փոխանակվող արժույթով:


Պրակտիկան ցույց է տալիս, որ Հայաստանում ձևավորված քաղաքական և տնտեսական իրավիճակում պետական ֆինանսավորումը նկատելիորեն կրճատվում է և գնալով ավելի շատ կիրականացվի առևտրային կառույցների միջոցով: Դա իր հերթին կբերի առևտրային բանկերի կողմից նշանակալից քանակով ձեռնարկությունների լայն ընդգրկմանը, որոնք տիրապետում են հզոր ֆինանսական ռեսուրսների: Քանի որ նոր բանկերի ստեղծումը դառնում է ավելի դժվար, ավելի կընդլայնվի գործող բանկերի ծառայություններին դիմելը: Այս իրա-

վիճակում ուժեղանում է բանկերի ուշադրությունը դեպի մարքեթինգի հիմնախնդիրները:

Հաճախորդի ընդլայնման նպատակով բազմաթիվ նման բանկեր սկսեցին մշակել հաճախորդների ներգրավման հատուկ ծրագրեր: Նրանցից ոմանք բարձրացնում են ավանդների տոկոսադրույքները, նվազեցնում տրամադրվող վարկերի տոկոսադրույքները: Սակայն այս ճանապարհը սահմանափակված է խելամիտ մարժայի չափերով: Շատ բանկեր ընդլայնում են իրենց հաճախորդների սպեկտրը՝ վարկառուների իրենց առաջարկությունների տրամադրումը:

Մասնաճյուղերի քանակի ավելացումը օգնում է ռեսուրսների առաջնային բազան ամրապնդել նոր հաճախորդների ներգրավման շնորհիվ: Մասնաճյուղերի ցանցը բանկի համար հնարավորություններ է ստեղծում ակտիվ գործունեություն ծավալել տարածաշրջանում, հաճախորդների համար բարելավել ծառայությունների որակը: Այսօր մարզերում հաջողությամբ զարգանում են բանկերի մասնաճյուղները:

Ստեղծելով մասնաճյուղեր՝ առևտրային բանկը սովորաբար ցանկանում է ոչ միայն յուրացնել իր համար նոր տարածաշրջանը, այլև մտադրվում է ներդնել այս կամ այն նոր ծառայությունը (Մուվարյան Ա. Առևտրային բանկերի կորպորատիվ ռազմավարությունը և դրա արդյունավետությունը, Երևան 2008, էջ 35-36):



Պրակտիկան հաստատում է հայաստանյան բանկերի մասնաճյուղային ցանցի արագացված աճի համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների առկայությունը: Հիմնականում ավարտվել է կապիտալի նախասկզբնական կուտակման փուլը, և բանկերը բախվել են հետագա որակական և քանակական աճի, երաշխիքի և կայունության ապահովման անհրաժեշտության հետ:

Բանկերը սովորաբար հետապնդում են երկու հիմնական նպատակ՝ բանկի գործողության ոլորտի ընդլայնում և հիմնական գրասենյակը կորորդինացնող և ռազմավարական կենտրոնի վերածելու նպատակով օպերատիվ աշխատանքի հիմնական մասը գլխամասային բաժանմունքից մասնաճյուղերի վրա դնելու ձգտում:

Բանկային համակարգի հետագա զարգացման գործընթացը կընթանա ներքին կատարելագործման, արդեն գործող բանկային հաստատությունների մասնաճյուղերի և դուստր ձեռնարկությունների քանակի աճի ճանապարհով: Փորձը համոզում է, որ մասնաճյուղերի ստեղծումը հանդիսանում է առևտրային բանկերի՝ նոր տարածքներ ներթափանցելու և պակաս արդյունավետ գործող բանկերի հաճախորդների ներգրավման արդյունավետ եղանակ:

Հայաստանի տնտեսությունը շուկայականի անցնելու նոր փուլում վարկային հիմնարկները էապես փոխում են իրենց գործունեության ձևը և ոլորտները, կատարում են կառուցվածքային նորամուծություններ, ձգտում են իրենց համար բացել նոր շուկաներ: Կյանքն ինքը օբյեկտիվորեն ստիպում է նրանց գնալով ավելի մեծ չափերով սպառազինության՝ ընդունել աշխատանքի ժամանակակից շուկայական մեթոդներ, և առաջին հերթին, մարքեթինգի հսկայական ներուժ: Եթե դեռ վերջերս շատ բանկիրներ այն կարծիքի էին, թե առանց շուկայի լուրջ ուսումնասիրության, խորը հեռանկարային վերլուծության ապրել կարելի է, ապա այժմ դժվար թե հնարավոր լինի գտնել բանկի այնպիսի ղեկավարի, որը չգիտակցի ողջ նշանակությամբ:

<http://www.cba.am/am/SitePages/Default.aspx>

Այստեղից էլ՝ էլ ավելի մեծ ուշադրությունը դեպի բանկային մարքեթինգը՝ որպես գիտության և որպես պրակտիկ գործողության ուղեցույցի:

Առանցքային հասկացություններ. *վարկային գործընթաց, վարկային ռիսկ, վարկային պարտավորություններ, ֆինանսական կայունություն, մասնաճյուղ, ֆինանսական համակարգ, բանկային մարքեթինգ, ֆինանսական ռեսուրս, ներգրավված միջոցներ, ավանդային տոկոս:*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սուվարյան Ա. Առևտրային բանկերի կորպորատիվ ռազմավարությունը և դրա արդյունավետությունը, Երևան 2008, էջ 35-36, 51-54
2. Աբգարյան Կ. Առևտրային բանկերի էությունն ու գործառնությունները, Երևան 2006, էջ 19-22
3. Бупкина М. К. Деньги. Банки. Валюта. –М: АО ДИС, 1994
4. <http://www.cba.am/am/SitePages/Default.aspx> (Վերջին մուտքը 05.06.2012)

А. А. МХИТАРЯН

БАНКИ КАК СТИМУЛЯТОРЫ РЫНОЧНЫХ РЕФОРМ В АРМЕНИИ

Резюме

В последние годы активность банковской системы Армении приводит к тому, что финансовая система Армении является одним из основных участников рынка, в результате банковская система повысила процентные ставки по депозитам и снизила процентные ставки по кредитам. После этого банки стали финансировать и создавать условия для

успешного развития тех фирм, которые хотели расширить свою деятельность и выйти на мировой рынок.

Ключевые понятия: кредитный риск, кредитный процесс, кредитных обязательств, финансовой устойчивости, отделения, Управление финансами, финансовыми ресурсами, оборудованием участие, ставки по депозитам

A.A. MKHITARYAN
BANKS AS PROMOTERS OF REFORMS IN ARMENIA

Summary

In recent years, Armenia's banking system activity leads to the fact that Armenia's financial system and the banking system was a major participant in the market as a result of the banking system raised interest rates on deposits and lower interest rates on loans after banks began to fund and create the conditions for successful organizations who wanted to expand its activities and reach the global market.

Key concepts. *credit risk, credit process, loan commitments, financial stability, Branch, Financial Management, financial resources, equipment involved, the deposit rate, credit risk, credit process, loan commitment*